Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

N132m.

26 APR 2013

391.8
Ի-61

26 SEP 2006

15 JAN 2010

ԻՆՉ Է ՈՒՄԱԿԱՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

010
40677

126

Թարգմ. ռուսերէնից
Ղ. Տ. Գ.

Տպ. „ՇԻՄԱԿ" Ալէքսանդրապոլ
1 9 0 6
(40)

15.676

Дозволено цензурою. Тифлисъ, 15-го Фев. 1906 г.

ԻՆՉ Է ԹԱՄԿԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Իւրաքանչիւր պետութիւն ունի իր իշխանութիւնը, որի անունով հրատարակվում են օրէնքներ և, որի անունով կառավարվում է երկիրը։ Այդ իշխանութիւնը կոչվում է բարձրագոյն, որպէս զի որոշվի այն միւս իշխանութիւններից, որոնք իրանց ոյժն ստանում են այդ բարձրագոյն իշխանութիւնից և կազմում են նրա մասերը օրէնքներ հրատարակելու և երկիրը կառավարելու համար։ Դորա երկրորդական ստորադրեալ, իշխանութիւններ են, դորա բարձրագոյն իշխանութեան հրամանակատարներն են։

Պետութեան սահմաններում ապրող բոլոր մարդիկ պարտաւոր են անպայման հպատակվել բարձրագոյն իշանութեան ու կատարել նրա բոլոր հրամանները, որ արտայայտվում են օ-ինական ձևով և օրինական մարմինների մի-

ջոցով։ Դրա մէջ է կայանում բարձագոյն իշխանութեան ու պետութեան ժողովրդի կապը։ Այդ կապը մի բանի պետութիւնների մէջ կոչվում է հպատակութիւն, իսկ միւսների մէջ քաղաքացիութիւն, որն իսկապէս նոյն հպատակութիւնն է, բայց ոչ անձնատուրութեանն այլ պետութեանը։

Այն պետութիւնների մէջ, ուր բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է ժողովրդին, ժողովրդի ձեռին է, այնտեղ իշխում է *Ռամկավարութիւնը*՝ ժողովրդական կառավարութիւնը։ Հետևապէս, երբ պետութեան բարձրագոյն իշխանութիւնը՝ դեկը գանվում է հէնց իրա՝ ժողովրդի ձեռին, կառավարութեան այդ ձևը կոչվում է ռամկավարութիւն։ Ժողովուրդն ինքն է հրատարակում օրէնքներն ու ինքն է կառավարում երկիրը։ Օրէնքներն հրատարակվում են ժողովրդի անունից և ժողովրդի անունով էլ կառավարվում է երկիրը։ Այս ձևի կառավարութեան մէջ (ռամկավարական) երկրում գոյութիւն ունեցող օրէնսդիր ու վարչական բոլոր իշխանութիւնները կատարում են միայն և միմիայն ժողովրդի կամքը, գործում են նրա լիազօրութեամբ։

Ահա թէ ինչ է ռամկավարութիւնը։

Գործնական կեանքում ռամկավարութիւնը

կարող է ընդունել և ընդունում է իսկապէս զանազան ձևեր։

Բարձրագոյն իշխանութիւնն *ամբողջապէս* կարող է պատկանել ժողովրդին, առանց որևէ մէկի *մասնակցութեան*։ Ժողովուրդը կառավարում է երկիրը մէն-մէնակ, առանց բաժանելու իր իշխանութիւնը մէկի հետ, իշխանութեան լիակատար տէրն ինքն է միայն։ Դա նշանակում է, որ երկրում գոյութիւն ունի *զուտ ռամկավարութիւն*, *ռամկավարութիւններ լայն ձևով*։

Սակայն զուտ ռամկավարութիւնն էլ ունի երկու ձև՝ *անմիջական* ու *միջնորդական*։

Անմիջական ռամկավարութիւն կը լինի այն ժամանակ, երբ բոլոր ժողովուրդը, իրաքանչիւր անհատ (իհարկէ չափահասներն ու հոգեպէս առողջները) անմիջապէս մասնակցում է երկրի կառավարութեանը։ Այդպիսի կառավարութիւն այժմ գոյութիւն ունի Զուիցարական մի բանի Կանտոններում (նահանգներում)։ Այստեղ, սովորաբար գարնանն, հաւաքվում է երկրի բոլոր հասակաւոր, չափահաս ազգաբնակութիւնը բաց երկնքի տակ ու վճռում իրանց պետական գործերը։ Միայն ընթացիկ գործերն, ընթացիկ օրէնսդրութիւնն ու երկրի կառավա-

բութիւնը բոլոր ժողովուրդը չէ վարում, այլ նրա ընտրած փոքրաթիւ լիազօրների ժողովը։ Այդպէս անում են լոկ յարմարութեան համար։

Քիչ թուով մարդիկ հեշտութեամբ կարող են թէկուզ ամեն օր հաւաքվել և որովհետև նրանք ընտրվում են որոշ ժամանակով, ուստի և հեշտ է նրանց համար անձնական գործերից հրաժարվել և ամբողջապէս նուիրվել հասարակական գործերին։ Իսկ ամբողջ ազգաբնակութեան համար միանգամայն անհնարին է սեփական առօրեայ գործը թողած, շուտ-շուտ հաւաքվել և իր բոլոր ժամանակն ու աշխատանքը նուիրել հասարակական գործերին։ Բոլոր ընակչութեան համար հէնց նոյն իսկ հաղուագէպ ժողովներն էլ՝ տարին մի, երկու անգամ, հնարաւոր են լոկ փոքրիկ տերութիւնների մէջ։ Փոքրաթիւ ազգաբնակութեան համար, ասենք, համեմատաբար աւելի հեշտ է հաւաքվելն ու ժողովի համար յարմարաւոր տեղ գտնելը։

Զուիցարական Կանտոնները շատ փոքրիկ պետութիւններ են, գրեթէ մեր մի փոքրիկ նահանգի չափ, ուստի և այնտեղ այնքան էլ դժուար չէ բոլոր ժողովրդին մի տեղ հաւաքվելը։

Բայց այնպիսի պետութիւնների մէջ, ուր

ազգաբնակութեան թիւն հասնում է մի քանի տասնեակ, նոյն իսկ հարիւրաւոր միլիոնների, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ոչ մի հնար չը կայ համաժողովրդական (բոլոր ազգաբնակութեան) ժողով կազմելու։ Հարկաւ պէտք է բաժան-բաժան լինել։ Ակներև է, որ այստեղ ժողովուրդն ինքն անմիջապէս չէ կարող իրագործել իր բարձրագոյն իրաւունքները, ինքն անմիջապէս կառավարել երկիրը։

Այս անյարմարութիւնը վաղուց նկատված է և հէնց այն ժամանակ էլ գտել են դրանից ազատվելու միջոց, հնար։ Եթէ ամբողջ ազգաբնակութիւնն հնարաւորութիւն չուի անձամբ կառավարելու երկիրը, ապա նա կարող է ընտրել իրենց, հէնց իր միջից այնքան ընտրեալներ, որ առանց դժուարութեան կարողանան հաւաքվել ու կառավարել երկիրը։ Սրանից երբէք չի փոխվի գործի էութիւնը։ Բարձրագոյն իշխանութիւնն այնուամենայնիւ կը մնայ դարձեալ ժողովրդի ձեռքը, ժողովրդի բարձրագոյն իրաւունքները կը վերապահվեն դարձեալ իրան՝ ժողովրդին, միայն այդ իրաւունքները կիրագործվին ոչ ամբողջ ժողովրդի ձեռքով, այլ նրա մի մասի՝ նրա ընտրեալների ձեռքով։ Իսկ ժողովրդի իր ձեռքով, հէնց

իր միջից ընտրած մարդիկն իրարկէ ներկայացնում են նոյն ժողովուրդը։ Եւ ռամկավարութիւնը կը մնայ դարձեալ ռամկավարութիւն, (ժողովրդական կառավարութիւն) միայն անմիջական ձևից կանցնի միջնորդականի, որ կոչվում է *ժողովրդական ներկայացուցչութիւն*։

Ահա թէ ինչ է ռամկավարութեան երկրորդ՝ միջնորդական ձևը։

Ներկայիս ռամկավարութիւնն իր զուտ անմիջական ձևով գոյութիւն ունի լոկ Զուիցարիայի չորս Կանտոններում։ Երկրագնդի միւս պետութիւնների մէջ նա ընդունել է ժողովրդական ներկայացուցչութեան ձև։

Զուտ, անխառն ռամկավարութեան մարմնացումը մենք տեսնում ենք լոկ *հասարակապետութեան* մէջ։ (Ֆրանսիայում, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում և այլն)։ Այստեղ բարձրագոյն իշխանութիւնն *ամբողջապէս պատկանում է ժողովրդին*։ Հասարակապետութեան պետը, գլուխը թէև մի մարդ է՝ նախագահը, սակայն դրանով երբէք չէ խանգարվում զուտ ռամկավարութեան բուն սկզբունքը։ Նախագահը չը պիտի շփոթել մեզ։ Դա միապետ, ժառաւոր չէ օգոստափառ մրա-

բով ինչպէս բռնապետական ինքնակալ միապետութիւնների կամ նոյն իսկ սահմանադրական պետութիւնների մէջ։ Նա նոյնպիսի «հասարակ, սովորական մահկանացու» է, ինչպէս և հասարակապետութեան միւս բաղաքացիները։ Նա ժողովրդի զաւակն է, ժողովրդի, որի միջից և որի ձեռքով ընտրված է իր բարձր պաշտօնի համար։ Հասարակապետութեան նախագահ դառնալով, իբրև պետութեան գլուխ, յիրաւի նա վայելում է բացառիկ յարգ ու պատիւ, առանձին պաշտպանութեան, և մինչդեռ նախագահ է, ոչ որի առաջ պատասխանատու չէ համարվում իր արարքների համար։ Սակայն չը պէտք է մոռանալ, որ նա ընտրվում է որոշ ժամանակով և այդ ժամանակը լրանալուն պէս դառնում է միւսների նման սովորական բաղաքացի, բաղդակից նրանց բոլոր չար ու բարուն, կարող է դատի կոչվել ու պատասխանատվութեան ենթարկվել։ Այն ժամանակ կարող են նրանից հաշիւ պահանջել և իր նախագահ ժամանակ արածների համար։ Այսպէս հասարակապետական կառավարութեան մէջ պետութեան գլուխը՝ նախագահը նախ իր բարձր կոչումն ստանձնում է *որոշ ժամա-*

նակով (4-6 տարի), երկրորդ վերջի վերջոյ նա հաշիւ է տալիս ժողովրդին իր արարքների համար։

Այսպիսով, ընդ միշտ ամեն անգամ նախագահ ընտրելիս բարձրագոյն իշխանութիւնն, այսպէս ասած, վերադառնում է իր սկզբնական աղբիւրին՝ ժողովրդին և այդ իշխանութեան ժամանակաւորապէս նախագահին յանձնելը վերջինիս բացարձակապէս չէ ազատում ժողովրդին հաշիւ տալուց։

Եթէ իրաւամբ անօրէն, դժուար ու անհնարին է, նախագահին ամեն բոլէ պատասխանատուութեան ենթարկել, բարոյական պատասխանատուութեան խօ միշտ կարելի է ենթարկել։ Եթէ մէկն իր նախագահութեան ժամանակ առիթ տուեց ժողովրդի անբաւականութեան, չէ որ բացի դատի ենթարկելուց, նրան երբէք այլևս նախագահ չեն ընտրիլ։ Եւ յամենայն դէպս ժողովրդական կարծիքը կը դատէ նրան ամենախիստ կերպով ու կը վերադարձնէ իր հին հասարակ բաղաքացիական տեղը, խայտառակված, արատաւորված անունով։

Բացի այս, նախագահը խօ մէն-մէնակ չէ կառավարում երկիրը, այլ ժողովրդի ներկայացուցիչների հետ միասին և պետութեան հիմնական օրէնքների համաձայն, որոնցից մազի չափ անգամ չէ կարող շեղվել։

Ահա թէ ինչու հասարակապետութեան մէջ, չը նայելով, որ ի դիմաց նախագահի գոյութիւն ունի «միապետ», բայց և այնպէս լիապէս գործադրվում է զուտ ռամկավարութիւնը։ Ինչպէս տեսնում ենք վերջի վերջոյ բարձրագոյն իշխանութիւնը դուրս չէ գալիս ժողովրդի ձեռքից։ Ժողովուրդն ընդ միշտ մնում է էապէս ինքն իր բաղդի որոշող։

Բացի այս լիակատար, զուտ ռամկավարութիւնից, որ գոյութիւն ունի հասարակապետութիւնների մէջ, ռամկավարութիւնը գործադրվում է և կրճատված, բաժանված ձևով։ Ռամկավարութեան այս ձևը գործադրվում է *սահմանադրական* անուանված պետութիւնների, սահմանադրական միապետութիւնների մէջ (ինչպէս Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլն)։

Սահմանադրական միապետութիւնների մէջ *ժողովուրդն իր բարձրագոյն իշխանութիւնը բաժանում է միապետի հետ* (կայսեր, թագաւորի, իշխանի)։ Սահմանադրական պետութիւնների մէջ բարձագոյն վարչութիւնը կազմված է *երկու իշխանութիւնից՝* միապետից

(կայսրից, թագաւորից) և ժողովրդական ներկայացուցիչներից։ Այդ երկուսը միասին միայն կազմում են պետութեան բարձրագոյն իշխանութիւն։ Մէկն առանց միւսի բարձրագոյն իշխանութեան իրաւունքներ չունի։ Ահա դրա մէջն է սահմանադրական միապետութիւնների ռամկավարական սկզբունքն ու խոր նշանակութիւնը։

Սովորաբար իւրաքանչիւր օրէնք, ակտ սահմանադրական պետութիւնների մէջ այն ժամանակ է միայն ոյժ ստանում ու պարտադիր դառնում ժողովրդի համար, երբ հաստատւում է երկու իշխանութիւնների կողմից ևս, այսինքն և կայսեր և ժողովրդի ներկայացուցիչների կողմից։ Ոչ միապետն իր կողմից (կայսրը, թագաւորը) կարող է առանց ժողովրդի ներկայացուցիչների օրէնք հրատարակել, որ պարտադիր լինի ժողովրդի համար և ոչ էլ ժողովրդական ներկայացուցիչներն առանց միապետի (թագաւորի)։

Սակայն այնուամենայնիւ միապետի և ժողովրդական ներկայացուցիչների յարաբերութիւններն ու դիրքը սահմանադրական պետութիւնների մէջ և նախագահի ու ժողովրդական ներկայացուցիչների դիրքն ու յարաբերութիւն-

ները հասարակապետութեան մէջ միանգամայն տարբեր են։ Նախագահի կոչումը հասարակապետութեան մէջ, մեզ յայտնի է։ Հասարակապետութեան մէջ ինչպէս տեսանք, ժողովուրդն իր իրաւունքները չէ բաժանում պետութեան գլխի՝ նախագահի հետ։ Նա ինքն է տալիս նախագահին բարձրագոյն իշխանութիւն, նրա հետ միասին կառավարում է երկիրն և կարևոր դէպքում զրկում է նրան այդ իշխանութիւնից ու դատի ենթարկում։

Բոլորովին ուրիշ բանէ սահմանադրական միապետութիւնների մէջ։

Այստեղ մի իշխանութիւն ժողովրդական ներկայացուցիչներն ունեն, մի իշխանութիւն միապետը։ Միապետի իշխանութիւնը ժողովրդից չէ, նա թագաւորում է «*ողորմութեամբն Աստուծոյ*», այսինքն նրա իշխանութիւնն համարվում է աստուածային տուրք, ի նշան որի և թագադրվում ու օծվում է։ Ժողովրդական ներկայացուցիչներն, ընդհակառակը, այստեղ էլ իրանց իշխանութիւնն ստանում են ժողովրդից և գործում են ժողովրդի կամքի ու տուած լիազօրութեան համաձայն։ Եւ մինչդեռ հասարակապետութեան մէջ պետութեան գլխին՝ նախագահին ժողովուրդն է տալիս բար-

ձրագոյն իշխանութիւն, սահմանադրական միապետութիւնների մէջ ընդհակառակը միապետն է շնորհում ժողովրդին բարձրագոյն իշխանութեան մէջ մասնակցելու իրաւունք, եթէ այդ իրաւունքը յեղափոխութեան միջոցով ձեռք չէ բերել ժողովուրդը։ Եւ, որ գլխաւորն է, ժողովրդական ներկայացուցիչների իշխանութիւնը այստեղ չէ տարածվում պետութեան գլխի՝ միապետի վրայ, ինչպէս հասարակապետութեան մէջ։

Միապետն իր իշխանութիւնն ստանալով «Աստծուց», Նրա ձեռքով էլ միայն կարող է զրկվել այդ իշխանութիւնից։ Աստուած էլ կարող է զրկել Նրան այդ իշխանութիւնից կամ խելքն առնելով կամ հոգին, այսինքն, երբ միապետը կամ հոգեկան հիւանդութիւն կրողնայ ու անընդունակ կը դառնայ երկիրը կառավարելու կամ հէնց այնպէս կը մեռնի, այլապէս Նրան իշխանութիւնից հեռացնելու ուրիշ օրինական ճանապարհ չը կայ։ Միապետն իբրև «Աստծու ընտրեալ» համարվում է *անսխալական*, ուստի և *պատասխանատու* չէ իր արարքների համար ոչ օրի առաջ։ Ո՛չ մի դէպքում և ո՛չ մի կերպ չէ կարելի Նրան դատի ենթարկել։ Նրա համար գոյութիւն ունի միայն մի դատ՝

յեանորդների դատը։ Նրա փոխարէն պատասխանատու են նախարարները՝ մինիստրները, որոնց և միապետի մեղքի համար դատում է ժողովուրդը։

Սակայն, սահմանադրական միապետութիւնների մէջ գոյութիւն ունի *սահմանադրութիւն*, այսինքն երկրի *հիմնական օրէնքների հաւաքածու*, որ *պարտադիր է բոլորի համար*, ի թիւս որոց և միապետի համար։

Եւ ահա այդ սահմանադրութեան շնորհիւ երկրի մէջ ամեն ինչ կատարվում է օրէնքի համաձայն ու կառավարութեան ոչ մի ապօրինի վարմունք չէ մնում անպատիժ։ Սահմանադրութեան անշեղ գործադրութեանն աշխատում են ժողովրդական ներկայացուցիչները և իրարանցիր զանցառուի առանց բացառութեան, թէկուզ լինի նա միապետական վարչութեան անդամներից, ենթարկում են օրինական պատասխանատուութեան։

Կեանքի այդ օրինական ընթացքի մէջ է կայանում ռամկավարութեան թանկագին բարիքը սահմանադրական միապետութիւնների մէջ։

Սահմանադրական միապետութիւնների մէջ էլ ժողովրդի մասնակցութիւնն երկրի կառա-

վարությեան գործում տարբեր է։ Մի բանիսում ժողովրդի մասնակցությունն աւելի մեծ է, մի բանիսում աւելի փոքր։ Հետևապէս ամենց մէջ ռամկավարական սկզբունքն իրականացած է աւելի մեծ չափերով լրիւ, ամենց մէջ ոչ, կրճատ ձևով։

Ռուսաստանում երկիրը կառավարվում է անսահման իշխանության տէր ինքնակալ միապետի ձեռքով։ Նրա անունով էլ հրատարակվում են երկրի բոլոր օրէնքները։ Բարձրագոյն իշխանությունն Ռուսաստանում ամբողջապէս պատկանում է Կայսրին։ Նա չէ բաժանում այդ իշխանությունը ժողովրդի հետ, ուստի և կոչվում է միահեծան, ինքնակալ միապետ։

Պետության ընդունած *եկեղեցու վարդապետությամբ* Ռուսաց Կայսրը թագաւորում է «*ողորմությամբն Աստուծոյ*» այսինքն իր իշխանությունն ստացել է ոչ թէ ժողովրդից, այլ Աստուծուց, ի նշան որի գահակալության ժամանակ ձեռնադրվում է (թագադրվում) և օծվում մեռոնով, ուստի և նրա ամեն մի արարքն համարվում է անսխալ և ինքն երբէք պատասխանատու չէ իր և ոչ մի արածի համար։

Ժողովուրդն այստեղ ոչ մի մասնակցություն չունի բարձրագոյն իշխանության մէջ։

Այս կարգին, կամ աւելի ճիշտ ասած կառավարության այս ձևին հիմք դրվեց Ռուսաստանում XVI դարից և վերջնականապէս հաստատվեց մօտաւորապէս XVIII դարում։ Բայց առաջ բոլորովին ՈՒՐԻՇ ԿԱՐԳԵՐ էին տիրում։ Առաջ Ռուսաստանումն էլ գոյություն ունէր ռամկավարություն և այն իր լիակատար ձևով։ Բարձրագոյն իշխանությունն ամբողջապէս պատկանում էր ժողովրդին և այդ իշխանությունը գործադրում էր նա անմիջական ձևով (առանց միջնորդի)։ Այդպէս էր Ռուսաց պատմության առաջին, հնագոյն Կիևեան-շրջանում։ Այն ժամանակ ռուս ժողովուրդն ինքն էր կառավարում երկիրն և ինքն հրատարակում օրէնքներ։ Սովորաբար բոլոր չափահաս և իրաւատէր տղամարդ ազգաբնակությունն հաւաքվում էր քաղաքի հրապարակի վրա, բաց երկնքի տակ և այդտեղ վճռում բոլոր հասարակական հարցերը։ Այդպիսի ժողովրդական ժողովները կոչվում էին *խորհուրդները* (вѣчье) և գոյություն ունէին այն ժամանակուայ ռուսաց երկրի բոլոր շրջաններում խորհրդակցական կառավարությունն։ Առանձնապէս լայն ու լի-

40677

կատար զարգացում ստացաւ Նովգորոդում և Պսկովում, ուր նա շարունակվեց մինչև XVI դարը։ Միւս շրջաններում այդ խորհուրդները կազմաւորվեցին աւելի վաղ (XIII-XIV դ.)։ Այդ խորհուրդներում (ժողովներում) ժողովուրդը վճռում էր պատերազմի ու խաղաղութեան, օրէնքների հրատարակութեան, ընթացիկ գործերը կառավարող պաշտօնեաների ընտրութեան և այլ հարցեր։ Հէնց այդտեղ էլ ընտրվում էր իշխան պատերազմում զօրքին առաջնորդելու և ընթացիկ գործերը ղեկավարելու համար։ Իշխանը վայելում էր բարձրագոյն իրաւունքներ, բայց նա երբէք բարձրագոյն իշխանութեան միակ նեկրայացուցիչը չէր, նա մինչև անգամ չէր էլ բաժանում այդ իշխանութիւնը ժողովրդի հետ, ինչպէս այժմ անում են սահմանադրական միապետները, այլ միայն որոշ արտօնութիւններ, իրաւունքներ էր ստանում ժողովրդից բարձրագոյն իշանութեան մէջ։ Սակայն Բարձրագոյն կառավարութեան իսկական ղեկավարն այնուամենայնիւ մնում էր դարձեալ ժողովուրդը, որն իշխան ընտրելով հանդերձ շարունակում էր խորհրդի միջոցով իր բարձրագոյն իրաւունքներն իրագործել։

Խորհուրդն (вѣчье) հաւարվում էր շատ յա-

ճախ և ինչպէս ասացինք վճռում էր ամեն տեսակ ընթացիկ գործեր։ Իսկ իշխանն ու իր օգնականները, խիստ մտրով վերցրած, այդ ժողովրդական խորհուրդների (вѣчье), ժողովների լոկ հրամանատարներն էին, վճիռներն ի կատար ածողներ, ժողովրդի կամքն իրագործողներ։

Գահ բարձրանալով, կամ ինչպէս այն ժամանակ էին ասում՝ թախտ նստելով, իշխանն հաստատում էր խաչը, երդվում էր ժողովրդի առաջ արդարութեամբ կառավարել երկիրը, համաձայն ընդունված կարգերի և օրէնքների։ Նովգորոդում ընտրված իշխանի հետ մինչև անգամ գրաւոր պայման էին կապում։ Այդ պայմանագրի մէջ մէկ-մէկ թվում էին իշխանի բոլոր իրաւունքներն ու պարտաւորութիւնները և ի նշան այդ պայմանը սրբութեամբ կատարելու իշխանն ստորագրում էր պայմանագիրը։ Պայմանը բանդելուն համար իշխանը զրկվում էր իր իրաւունքներից և յաճախ ժողովրդի իրաւունքներին ձեռք տուողին զրկում էին գահից, կամ ինչպէս այն ժամանակ էին ասում «ճանապարհ էին ցոյց տալիս», ըսում էին։

Ժողովուրդն իր իրաւունքն համարելով իրեն համար իշխան ընտրելը, նա իրան իրա-

ունը էր համարում նաև նրան հեռացնելը և յաճախ օգտվում էր այդ իրաւունքից։ Ժողովուրդն երբէր անուշադիր չէր թողնում իր ընտրած իշխանի կառավարութիւնը, այլ աչալուրջ հետևում էր նրա գործունէութեանն և կարևոր գէպքում զրկում նրան գահից։ Եւ այդպէս Կիևեան դերիշխանութեան շրջանում բարձրագոյն իշխանութիւնն ամբողջապէս պատկանում էր ժողովրդին, որից նա օգտվում էր անմիջապէս, առանց կողմնակի միջնորդների։ Իշխանն ընտրվում էր ժողովրդից, իր իշխանութիւնն ստանում ժողովրդից, երկիրը կառավարում նոյն ժողովրդի լիազօրութեամբ, ժողովրդի հետ միասին, ժողովրդական խորհրդի (вѣчье) օգնութեամբ, որը չը նայելով իշխանական կառավարութեան, ընդ միշտ գործում էր անընդհատ։ Իշխանն իր պետական գործունէութեան մէջ կաշկանդված էր որոշ պայմանով, գտնվում էր ժողովրդական խորհրդի անմիջական հսկողութեան տակ և իր գործումների, նոյն իսկ ամենափոքր սխալմունքի համար ենթարկվում էր ժողովրդի դատին և կարող էր զրկվել մինչև անգամ ապրուստից ու գահից։

Հին ռուսական իշխանի դիրքը Կիևեան շրջանում

ջանում շատ նման է նախապահի դիրքին ժամանակակից հասարակապետութեան մէջ։ Նանոյնպէս, ինչպէս նախապահն, ընտրվում էր ժողովրդից և թէև ոչ որոշ ժամանակով, սակայն հաղիւ էր պատահում, որ ցմահ իշխէ և գործնական կեանքում յաճախ այդ ընտրութիւնը դուրս էր գալիս ժամանակաւոր, իշխան, ինչպէս և նախապահը, պատասխանատու էր ժողովրդի առաջ ենթարկվում էր ժողովրդի դատին և յաճախ նոյն իսկ զրկվում իշխանութիւնից։

Մոսկվայի դերիշխանութեան շրջանում իրերի դրութիւնը փոխվեց։ Մոսկովեան իշխաններն՝ Ռուսիայի միացնողներն, իրենց հետ բերին նոր հասկացողութիւններ, նոր սկզբունքներ, որոնց համաձայն և հիմնվեցին քաղաքական նոր կարգեր, կառավարութեան նոր ձև։ Մոսկովեան իշխաններն սկսեցին գահին տիրանալ ոչ ժողովրդի ընտրութեամբ, այլ ընկերներում մինչդեռ տիրապետում էր թաթարական իշխանութիւնը—խանի ողորմածութեամբ և ապա սկսեցին գահը յանձնել ժառանգ-ժառանգ՝ հօրից որդուն։ Ժողովրդական խորհուրդը (вѣчье) վաղուց անհետացել էր, թաթարական տիրապետութեան ժամանակ, երբ խանը ռուսական երկրի միահեծան տէրն էր, ժողո-

վուրը կամաց-կամաց կորցրեց իր մասնակցութեան իրաւունքը երկրի կառավարութեան գործում և ապա նոյն իսկ բոլորովին հեռացրվեց գործերից, զրկվեց իր նախկին իրաւունքներից։ Իսկ երբ ընկաւ թաթարական տիրապետութիւնը, Մոսկվայի իշխանները, հպարտացած, թէ իրանք են փրկել Ռուսաստանը թաթարական լծից, չը յիշեցին անգամ ժողովրդի իրաւունքների մասին։ Ընդհակառակը նրանք ամեն կերպ աշխատեցին բնաջինջ անել իրանց համար առելի ու զզվելի ռամկավարութեան վերջին մնացորդներն անգամ։ Նրանք բարձրագոյն իշխանութիւնն անմիջապէս, իր լիակատար կազմով ստացան թաթարական խանից և իրանք էլ խանի նման դարձան բռնակալներ, չուզեցին նախկին իշխաններին գոնէ մասամբ նմանել երկրի կառավարութեան ջանքերը բաժանել ժողովրդի հետ։ Նրանք ուզեցին ամբողջ պետութիւնն իրենց «բռի մէջ առնել»։

Մեծ իշխան տիտղոսի փոխարէն, ինչպէս կոչում էին իրանց իշխանները Կիևեան ռուսիայում, Մոսկվի իշխանն սկսեց իրան անուանել թագաւոր համայն Ռուսիայի, ինքնակալ, որ թագաւորում է «ողորմութեամբն Աստուծոյ» և ոչ ժողովրդի ընտրութեամբ և այն օրուանից սկսեցին իշխանները շրեղ հանդէսով օծվել թագաւոր։

Նորա այլևս չէին երդվում ժողովրդին, ինչպէս երդվում էին հին ռուսական իշխանները, այլ ընդհակառակը ժողովուրդն սկսեց երդվել նրանց ամենահնազանդ, ստրկական ձևով։

Քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ, Յունաստանից եկած հոգևորականութիւնն իր հետ Ռուսաստան բերեց և յունական ուսմունքն իշխանութիւնների մասին ընդհանրապէս և արքայական իշխանութեան մասին մանրամասնապէս։ Եւ ահա այդ հոգևորականութիւնն սկսեց բարոզել, թէ «իշխանութիւնն Աստուածային տուրք է ու չկայ մի իշխանութիւն, որ Աստծուց չը լինի», ուստի «ով որ հակառակի իշխանութեան, նա հակառակ կը լինի և Աստծու», «Աստծուց վախեցէք, թագաւորին պատուեցէք» մինչև անգամ անարժաններին, վատերին, որովհետև վաղը թագաւորներին Աստուած ուղարկում է մարդոց մեղքերի համար հայն, հայն։ Մոսկուայի իշխանների ըմբռին շատ դիւր եկաւ այն ուսմունքը, որը շատ լաւ իրացրին նորա ու վերապրեցին բաց։ Շատ շուտով ժողովրդական ընտրեալներից նորա «ողորմածութեամբն Աստուծոյ» դարձան ինքնակալ թագաւորներ

ու ժողովրդին սկսեցին նայել «իբրև իրանց մշակների» ստրուկների վրայ, ինչպէս անել էր Գոդունին:

Սակայն XVII դարի սկզբներում Մոսկովի Ռուրիկովիչների իշխանական տանը մի դժբաղդութիւն պատահեց: Վերջին թագաւորը մեռաւ առանց արու ժառանգի, թագաւորաց տոհմն ընդհատվեց: Թագաւոր չը կար և բարձրագոյն իշխանութիւնը նորից անցաւ ժողովրդի ձեռքը: Ժողովուրդը ոտքի կանգնեց և իր բաղդի որոշող դարձեալ ինքը դարձաւ, մեռած ռամկավարութիւնը նորից յարութիւն առաւ, սակայն երկրի բարձրագոյն կառավարութիւնն իսկոյն նա յանձնեց իր ընտրեալին: Այսպէս թագաւոր ընտրվեցին Գոդունովը, Շույսկին, վերջապէս Ռոմանովները: Թագաւոր ընտրելով հանդերձ ժողովուրդն ինքը չէր հրաժարվում պետական գործերից, մի կողմ չէր քաշվում: Նա շարունակում էր օգնել իր ընտրեալներին (թագաւորներին) երկիրը կառավարելու գործում: Այդ օգնութեանն առանձնապէս կարիք էր զգում Միխայել Ռոմանովը, մի անփորձ մարդ, որ յանձն առաւ քայքայված պետութեան ղեկը և նրա թագաւորութեան ժամանակ, մանաւանդ սկզբի տարիներում, ժողովուրդը մշտական մաս-

նակցութիւն ունէր երկրի կառավարութեան գործում: Սակայն յարութիւն առած ռամկավարութիւնն այս անգամ բոլորովին ուրիշ ձև ընդունեց: Ողջ Ռուսեան միացել էր ու լայնարձակ տարածվել ամեն կողմ: Բոլոր ժողովրդին՝ տուն գլուխ մի մարդ հաւաքվել մի տեղ-անհնարին էր: Ուստի սկսեցին ամեն տեղից ներկայացուցիչներ ընտրել և նրանց ուղարկել իրանց կողմից Մոսկվայի ժողովրդական խորհրդին մասնակցելու. այսինքն ռամկավարութիւնն ստացաւ միջնորդական ձև—*ժողովրդական ներկայացուցչութեան*-ձև: Ժողովրդական այդ նոր խորհուրդները ստացան և նոր անուն՝ *համայնական ժողովներ* (земскіе зоборы): Այսպէս համայնական ժողովներն Ռուսաստանում ժողովրդական ներկայացուցչութեան առաջին փորձն եղան: Առաջին ժողովը գումարվեց XVI դարում, բայց չափազանց թերի, անկատար ձևով, որն իհարկէ շատ հեռու էր ժողովրդական ներկայացչութեան այն ձևից, որի մասին մենք խօսեցինք առաջ: Այդ ժողովների մասնակցութիւնը երկրի կառավարութեան գործում կայանում էր լոկ նրանում, որ խորհուրդներ էր տալիս թագաւորին: Թագաւորն երբէք մասնակից չէր անում նրանց բարձրագոյն իշ-

խանութեանն, այլ միայն ի դիմաց համայնական ժողովի անդամների լսում էր ռուս ժողովրդի ձայնն և երբեմն բարեհաճում էր ուշադրութեան արժանացնել այդ ձայնը։ Բոլոր այն փորձերը, որ Ռիւրիկովիչների տան անկումից յետոյ գործ դրվեցին, որպէսզի ընտրված թագաւորը գրաւոր կերպով պարտաւորվի բարձրագոյն իշխանութիւնը բաժանել ժողովրդի հետ, այսինքն երկիրը կառավարել ժողովրդական ներկայացուցիչների հետ միասին-անյաջող անցան։ Համայնական ժողովները խորհուրդներ տալուց այն կողմը չանցան։ Իսկ, երբ թագաւորների իշխանութիւնը մի փոքր ուժեղացաւ, ամրացաւ ու պետութիւնը կազդուրվեց խռովութիւններից, ժողովուրդն այդ խորհուրդներ տալու իրաւունքից էլ զրկվեց։ Դադարեցին այլևս համայնական ժողովներ հրաւիրելուց, դադարեցին ժողովրդին լսելուց, նոյն իսկ բոլորովին մոռացան նրան։ Եւ այն ժողովուրդը, որ մի ժամանակ օգտվում էր ինքն իր բաղդը որոշելու, ինքն իրեն կառավարելու իրաւունքով, ահա այդ ժողովուրդը խառնակ ժամանակների ընթացքում շատ շուտով XVII դարի կէսին դարձաւ բարձրագոյն իշխանութեան խոնարհ, հլու-հնազանդ ծառան։

«Ազգային գրադարան»
NL0192147

15.616

321.8
h-61